Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն N 10

2022 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 17-ԻՆ ԿԱՅԱՑԱԾ ՓՄՁ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻ

քաղաք Երևան

Մասնակցում էին՝

1	Ռաֆայել Գևորգյան	Էկոնոմիկայի նախարարություն, Նախարարի տեղակալ
2	Օրի Ալավերդյան	Ֆինանսների նախարարություն
3	Լևոն Սահակյան	Կենտրոնական բանկ
4	Տիգրան Ղալայան	Կենտրոնական բանկ
5	Արթուր Մանուկյան	Պետական եկամուտների կոմիտե
6	Հրաչյա Մուրադյան	Պետական եկամուտների կոմիտե
7	Անդրանիկ Ալեքսանյան	ՀՀ առևտրաարդյունաբերական պալատ
8	Էդիկ Կիրակոսյան	Հայաստանի արդյունաբերողների և գործարարների միություն
9	Էդուարդ Բաղալյան	«Քաղաքացի-հարկատու-բիզնես» իրավապաշտպան կազմակերպության փոխնախագահ
10	Ռուբեն Օսիպյան	"ՓՄՁ Համագործակցության Ասոցիացիա" ՀԿ "SME Cooperation Association" NGO
11	Փայլակ Թադևոսյան	«Հարկ վճարողների պաշտպանություն» ՀԿ նախագահ
12	Կարինե Սարգսյան	Ամերիկայի առևտրաարդյունաբերական պալատի գործադիր տնօրեն
13	Արմինե Դավթյան	Ամերիկայի առևտրաարդյունաբերական պալատ
14	Լուսինե Մնացականյան	«ԿՈԿԱ-ԿՈԼԱ ՀԵԼԼԵՆԻԿ ԲՈԹԼԻՆԳ ՔԱՄՓՆԻ ԱՐՄԵՆԻԱ» փակ բաժնետիրական ընկերություն (ՓԲԸ)
17	Տիգրան Շահբազյան	Հայաստանի ՓՄՁ հաշվապահների ասոցիացիա
18	Էմմա Հարությունյան	«ՋԵՐՄՈՒԿ ԻՆԹԵՐՆԵՅՇՆԼ ՊԵՊՍԻ-ԿՈԼԱ ԲՈԹԼԵՐ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն (ՍՊԸ)

19	Լուսինե Սարգսյան	«ՋԵՐՄՈՒԿ ԻՆԹԵՐՆԵՅՇՆԼ ՊԵՊՍԻ-ԿՈԼԱ ԲՈԹԼԵՐ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն (ՍՊԸ)
20	Հովսեփ Պատվականյան	Գործարարության աջակցման գրասենյակի ղեկավար
21	Դավիթ Աղաջանյան	Գործարարության աջակցման գրասենյակի փորձագետ
24	Հռիփսիմե Հովհաննիսյան	Էկոնոմիկայի նախարարություն, Ձեռներեցության զարգացման վարչություն
25	Թամարա Սարգսյան	Էկոնոմիկայի նախարարություն, Ձեռներեցության զարգացման վարչություն

Նիստի բացմանը ողջույնի խոսքով հանդես եկավ Էկոնոմիկայի նախարարի տեղակալ Ռաֆայել Գևորգյանը:

Նիստի ընթացքում քննարկվեցին՝

ՀԱՐՑ 1. ԱՆԿԱՆԽԻԿ ԳՈՐԾԱՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՕՐԵՆՔԻ ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐ

Դավիթ Աղաջանյանի առաջարկությամբ քննարկվեց «Անկանխիկ գործառնությունների մասին» օրենքի ՊԵԿ աշխատակիցների կողմից մեկնաբանության խնդիրը:

ՀՀ ՊԵԿ ուսումնական կենտրոնում թեմայի վերաբերյալ կազմակերպված դասընթացի ժամանակ նշվել է, որ եթե վճարումը նախաձեռնվել է կանխիկ և վճարվել է ստացողի բանկային հաշվեհամարին, **անպայման պետք է իրականացվի վճարողի աշխատակցի միջոցով**, այլապես վճարումը չի դիտվի որպես անկանխիկ: Այս մեկնաբանությունը ներկայացվել է որպես ՊԵԿ-ի դիրքորոշում, ինչն էլ առաջացրել է տնտեսավարողների մտահոգությունը:

Քննարկումների արդյունքում որոշվեց՝

Պետական եկամուտների կոմիտեի Վարչարարության մեթոդաբանության և ընթացակարգերի վարչության պետ Հրաչյա Մուրադյանը պարզաբանեց, խնդիրն առաջ է եկել օրենսդրական դրույթի սխալ մեկնաբանության հետևանքով և «Անկանխիկ

գործառնությունների մասին» օրենքի փոփոխությամբ նման կարգավորում նախատեսված չէ:

ՀԱՐՑ 2. ՇՐՋԱՆԱՌԵԼԻ՝ ԲԱԶՄԱԿԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏԱՐԱՆԵՐԻ ՀԱՐԿՄԱՆ ԽՆԴԻՐ

Լուսինե Մնացականյանի ներկայացմամբ քննարկվեց Շրջանառելի՝ բազմակի օգտագործման տարաների հարկման խնդիր:

Հարկային օրենսգրքով նախատեսված է, որ «Շրջանառելի՝ բազմակի օգտագործման տարայով տարայավորված ապրանք արտադրողի կողմից կառավարության սահմանած չափանիշները բավարարող շրջանառելի՝ բազմակի օգտագործման տարայի օտարումը ազատված է ԱԱՀ-ից»:

Գործող կարգավորումներից բխող հիմնական խնդիրը արտադրողից բացի շուկայի մյուս մասնակիցների միջև տարաների վաճառքից առաջացող ԱԱՀ-ն է, որը գոյանում է ինչպես բազմակի օգտագործման տարաներով տարայավորված ապրանքը վաճառելիս, այնպես էլ բազմակի օգտագործման տարաները արտադրողին վաճառելիս:

Քննարկումների արդյունքում որոշվեց՝

Խորհդի անդամների կողմից որպես խնդրի լուծման տարբերակ առաջարկվում էր դիտարկել օրենսգրքի վերոգրյալ կետում փոփոխություն իրականացնելը և «արտադրողի կողմից» արտահայտությունը հանելը: Սակայն Ֆինանսների նախարարության Եկամուտ-ների քաղաքականության և վարչարարության մեթոդաբանության վարչության պետ Օրի Ալավերդյանը դեմ էր նման փոփոխությանը՝ մեկնաբանելով, որ այդ փոփոխությունը դրական ազդեցություն կունենան միայն տնտեսավարողների փոքր շրջանակի վրա:

Հաշվի առնելով քննարկման ժամանակ ներկայացված դիտարկումների համախումբը, որոշվեց խնդրի լուծման փոխադարձ ընդունելի լուծում գտնելու նպատակով առավել նեղ աշխատանքային քննարկումներ կազմակերպել, որի ընթացքում պետք է ներկայացվեն հաշվարկ-հիմնավորումներ՝ խնդրի լուծման տարբեր տարբերակներում տնտեսավարողների համար դրական և բացասական ֆինանսական ազդեցությունը գնահատելու նպատակով:

Նիստի ընթացքում, քննարկվեց նաև Ֆինանսների նախարարության կողմից շրջանառվող Միկրոձեռնարկատիրությանը վերաբերող ՀՕ օրենսդրական փոփոխության նախագիծը, ինչպես նաև ներկայումս գործող հարկման տարբեր համակարգերի պատճառով ՓՄՁ–խոշոր առևտրային ընկերությունների միջև փոխհամագործակցության

մասով առաջա եկած խնդիրները և վերջիններիս համատեքստում դրանց հետ կապված ՀՕ–ի փոփոխություններ իրականացնելու նպատակահարմարությունը:

ՀՀ ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐ
(ԵՆԹԱԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ)

Վ.ՔԵՐՈԲՅԱՆ